# ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

<table>
<tr><th colspan="2"></th><th>N</th><th>Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը</th><th>Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկությունների ցանկը</th></tr>
<tr><td rowspan="4">Ապահովադրի վերաբերյալ</td><td rowspan="2">Ֆիզիկական անձանց համար</td><td>1</td><td>Անձը հաստատող փաստաթուղթ</td><td rowspan="8">1. Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե,<br>2. Ապահովադրի փոստային հասցե,<br>3. Ապահովադրի հեռախոսահամար,<br>4. Ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս) տեսակի Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում՝ Ավտոտրանսպորտային միջոցի՝ առանց վարորդի նստատեղի հաշվարկված նստատեղերի քանակ՝ տեխնիկական տվյալների համաձայն,<br>5. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ,<br>6. ապահովագրության ժամկետ,<br>7. ապահովագրավճարի վճարման նախընտրելի կարգ և ժամկետ:</td></tr>
<tr><td>2</td><td>ՀՀ քաղաքացիների դեպքում, եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք</td></tr>
<tr><td>Իրավաբանական անձանց համար</td><td>1</td><td>Հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող փաստաթուղթ</td></tr>
<tr><td>Այլ սուբյեկտների համար</td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2">Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) վերաբերյալ</td><td>1</td><td>Հաշվառման (գրանցման) վկայագիր կամ այլ համարժեք փաստաթուղթ կամ մաքսային հայտարարագիր և Օրենքի 5- րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն), եթե հաշվառման (գրանցման) վկայագրով 2 կամ այլ համարժեք փաստաթղթով կամ մաքսային հայտարարագրով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությունը չի հաստատվում: Այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների գծով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար հաշվառման (գրանցման) վկայագրի փոխարեն ներկայացվում է իրավասու պետական մարմնի կողմից տվյալ Ավտոտրանսպորտային միջոցին հատկացված հաշվառման համարանիշը</td></tr>
<tr><td>2</td><td>Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3- րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն)</td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2">Ներկայացուցչի վերաբերյալ</td><td>1</td><td>Անձը հաստատող փաստաթուղթ</td></tr>
<tr><td>2</td><td>Ապահովադրի կողմից տրված հասարակ, գրավոր ձևով կազմված լիազորագիր</td></tr>
</table>

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ (ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ) ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնցում տեղի չեն ունեցել որևէ փոփոխություններ: